

# ՀԱՅԱԿԱՆ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՌՈՒՍՍՈՒԹԵԱՆ:

»Ոռուսաց կառավարութիւնը երբէք չ կարող համաձայնվել Փոքր Սոխայում այնպիսի մի երկրի ստեղծման, ուր հայերն ունենային բայցառիկ առանձնաշնորհումներ և որը կազմէր հիմքը (կորիզը) մի հայկական անկախ թագաւորութեան, այդ լինելով, ի հարկէ, հայկական կօմիտէաների նպաստակեալոր:

Դրանք են այն խօսքերը, որ ոռուսաց պետութեան առաջին պաշտօնեան, իշխան Լօրանօվ, ասել է անդլիական դեսպանին Պետերբուրգում:

Այդ խօսքերը, որ արտասանված են գեռ անցեալ տարի, արձանադրված են անդլիական Ելու Book-ում:

Այդ խօսքերն աներեսութեան, ցինիկութեան հասնելու չափ պարզորշ կերպով ամփոփում են իրանց մէջ ոռուսաց պետութեան հակառակ շահերը և յայնովում են բանալին այն ընթացքի, որ Աստունի դէպքերից ի վեր ունեցել է այդ ողեալութիւնը հայերիս վերաբերութեամբ:

Այդ խօսքերն ամենաորոշ կերպով ներկայացնում են ոռուսաց պետութեան շահերի պատմական հակառակութիւնը հայ ժողովրդի շահերին:

Այդ խօսքերի խլաքանչեւր տառը թաթախված է հայկական արեան մէջ, ոռուսաց միապետութիւնը գաղտնի քաջալերը լինելով սուլթանի՝ սրա արիւնախում գաղանութիւնների մէջ:

Բայց «Հնչակի» համար այդ հակառակութիւնը նոյնքան պարզ էր ութ տարի առաջ, որքան այսօր: Այդ հասկացողութեան շնորհով էր, որ մենք սկզբից ի վեր հայերին նախադրուշացրնում էինք ոռուսաց միապետութեան դէմ: Մեր դատի բնական պաշտպանի դէրն Անդլիայի վրայ էր ընկնում, և գա՝ հենց այն պարզ պատճառով, որ այս վերջին ակրութեան շահերը, հակառակ լինելով Ոռուսաստանի շահերին, նպաստաւոր էին հայկական դատի լուծման յօդուահայոց պահանջների, յօդուահայոց ինքնուրույնութեան:

«Հնչակի» գյուղական գլուխէ սկզբից ի վեր էլ, սակայն, շատ կողմերից մեր վրայ յարձակվում էին, թէ ինչո՞ւ մենք հակառակ ենք ոռու-

սաց միապետութեան, որին, ընդհակառակը, իր պէտք էր սիրաշահել: Գանվեցան այնպիսի խելացիներ ես — և գրանց թիւն այսօր էլ պակաս չէ, հակառակ դէպքերից առաջացած բոլոր ապահովիչ խրառների, — գտնվեցան այնպիսի խելացիներ ես, ասում ենք, որոնք իրանց երեւակայական խելքից աւելի հեռու երևակայութիւնների հասան: Արանք մեզ մեզագրում էին նրանում, որ մենք սօցիալիստական գաղտփարներ էինք տարածում, առարկելով թէ այդ սօցիալիստ խօսքի շնորհով Ոռուսաստանը կը հակառակէ մեր գտամին:

Եյլպէս առարկողներն անշուշա զեկավարվում էին լոկ մի մաքով, որի հոգար բոլորովին հայկական գտառը չէր: Եյլ հոգան անխոստովանելի էր անդամ: Այդ առարկութեամբ նրանք ձզնում էին ոռուսաց պետութեան հակառակութեան պատճառով գէպի հայկական գտառը վերտպում մեզ, մինչդեռ միւս կողմից ոռուսաց պետութեան առջև իրանք կատարում էին շողաքարթութեան մարմարզութեան ամեն ձեւը՝ մինչև ջարի ուղերի տակ փորի վրայ տափակ, երեսն ի վայր ընկնելու քսութիւնը:

«Օհծազելի է ասել, որ մի հզօր պետութիւն երկիւղ կրելու լիներ սօցիալիստ բառից ու սօցիալիստ պրօլետարիացից, որ անվում է մի փոքրիկ տպդի մէջ թիւրքիայում: Նւ արդեօք հարկ կանգ առնելու այդ առարկութեան վրայ՝ նըրան ջնջելու համար: Աս ինքն իրան ջնջվում է, երբ յիշենք այստեղ միացն մի բան. այն, որ ոռուսաց պետութիւնը տակաւին Ռելինի գաշնագրութեան ժամանակները հակառակ էր ինքնուրցն ու անկախ մի Հայաստանի ստեղծման, և այդ էլ՝ իր անդրկովիկասեան սահմանների տակը: Դեռ այն ժամանակները ոռուսաց ամենահեղինակաւոր պետական անձեր յայնել են իրանց պետութեան այն ձգտումը, որով նա ուզում է իր ձեռքը զցել նաև թիւրքաց Հայաստանը, և գա՝ այն հիման վրայ, որ բացի իր քաջական աւանդութիւնից, որը կատակ է մնացել Պետրոս Մեծից՝ զրաւել ակրող Փաքր Սոխան ու Բալկանեան թերակըզգին, բացի այդ կատակից, Ոռուսաստանի այսօրւան շահերի պաշտպանութիւնը թելագրում է նրան իւրացնել թիւրքաց Հայաստանը: Լօրանօվի խօս-

քերն այսօր գալիս են իրեւ մի նոր պաշտօնական հաստատութիւն դրան։ Ենշուշտ այդ բոլորը զիտեն, իսկ եթէ չը զիտեն՝ պէտք է որ խմանային նրանք, որոնք մեր վրայ աղաղակում են, թէ մենք ոռւսաց սկետութեան վրայ չը պիտի յարձակվէնք, և որոնք նոյն իսկ այսօր ամեն մեղադրանք բարդում են մեր սօցիալիստական, ընկերվարական գաղափարի վրայ, որն իր թէ միակ պատճառն է այն թշնամութեան, որ ցոյց է տալիս՝ ներկայում այլ ևս բացարձակապէն՝ ոռւսական բոնապետութիւնը։

Այսօր ոռւսաց կառավարութիւնն անտանելի հալածանքների է սկսել ենթարկել ոռւսահայ ժողովրդին։ Չերքակալութիւններ, հսկողութիւններ, գպրոյնները փակել, գլուխնչական խոսութիւններ, կառավարական ոռւսական լրագիրների կեղանու ու անվերջ զրաբարտութիւններ հայերի դէմ, ոչ ուղարկառ աղբութիւնների վրայ ձնշում, մի մասնաւոր պարզ յանցանք վերագրել ընդհանուրին, կողմնակի օրէնքներով մի շարք մաքիավելական անօրինութիւններ, որով հայերի առևտուրը բոլորովին ընկած՝ ճննաժամի մէջ է, որ նանկութիւնների շարքն էլ անլոնդհատ ու տեւական, — այդ բոլորը ոռւսաց կառավարութիւնն այսօր անում է, անտարակոյս, ոչ այն պատճառով, որ յանկարծ ամեռողջ հայ ժողովրդին նկատած լինէր իրեւ սօցիալիստ, ինչ, ի հարկէ, կը լինէր արլամարութիւնների ծայրագոյնը, որ կարող են դործածել ինչպէս առարկութիւն՝ իրանք իրանց քաղաքագէտ կամ այլ ինչ անուանող մեծամիտ հայերը, բայց ոչ երբէք մի կառավարութիւն։

Վենք դարձեալ նախադգուշացնում ենք ոռւսաց պետութեան քաղաքականութեան դէմ։ Նա պատրաստում է հայերիս գերեզմանը։ Այսօր նա դաշնիք է կապել թիւրքիայի հետ մի կողմից մէկ կոտորել տալու համար, մինչեւ միւս կողմից տկարացնելու նոյն իրան թիւրքիային։ Առւլթանն ընկած անելանելի մի վիճակում՝ պարզօքն տեսնում է Ոռւսաստանի այդ ընթացքը, բայց ստիպված է հաշտվել գրա հետ, որպէսզի նրա, Ոռւսաստանի, բարեկամութեան շնորհով կարողանայ գեթ գուրս գալ իր ներկայ ճննաժամից։ Առւլթանը կարծում է զրանով ընտրել երկու չարիքներից փորբացնը։ Թէև եթէ քիչ պակաս կոյր լինէր, ուղղակի դրա հակառակը կը տեսնէր. այսինքն, այն, որ եթէ այսօր Ոռւսաստանի շնորհով կարողանում է խուսափել իր ներկայ ճննաժամից, բայց նոյն իսկ վաղը նա կընկնէ մէկ աւելի սոսկալի ճննաժամում, որը նրան բոլորովին կը կործանէ, և նրա այդ կործանողը կը լինի հէնց իր այսօրւան բարեկամը՝ Ապիտակ Յարը։

Այս օրերս տեղի ունի մի տեսակցութիւն Թըրանսիայի հարաւային մի քաղաքում, որի նոպա-

տակը, թւում է մեզ, չը պիտի օտար լինի Երեւելեան խնդրին։ Գրանսիական հանրապետութեան նախագահը, աւարտիական կայսրը և ռուսական գահաժամանողը, թէ ուղղակի և թէ իր քաղաքագէտների միջնարգութեամբ, տեսակցութեան մէջ են իրար հետ։ Ապող ենք արգեօք հաստատապէս ասել, որ այդ տեսակցութեան նպատակը սկզբանը առնենալ, որ եթէ այդ տեսակցութեան մի շարժառիթը վերոյիշած նպատակն է, անհասկած, հայերս չենք, որ կարող կը լինենք վաստակել մի բան այդ երեք տէրութիւնների գաղանի համաձայնութիւնից ու բոնելիք ընթացքից Երեւելեան խնդրում։ Գարնանային ու ամառնային գալիք ամիսներն արգեօք չե՞ն պատրաստում անակնկալներն երօպական այդ երեք պետութիւնների, թերեւ և գերմանիայի, կողմից, անակնկալներ, որոնք, վերջն հաշով, շատ ծանր պէտք է լինեն, դուցէ նոյն իսկ աղէտալի հայկական գատի համար։ Ապացոյց չէ արգեօք դրան Ոռւսաստանի պատրաստութիւնները, որ նա անում է թիւրքաց Հայաստանի սահմանագլխի վրայ։ Եւ պետութիւնների այդ գաղանի բանակցութիւններն առաջացնելով իրանց մէջ թիւրքիայի բաժանման խնդրը, բնական չէ արգեօք ենթադրել, որ այդ բաժանումը անդի ունենալով կանխապէս որոշված մի գաղանի նախադի եղանակով, Հայաստանն այն ժամանակ կը յանձնըվէ Ոռւսաստանին։ Ո՞ի շարք հարցեր, տաղնապեցույիչ, մուժ, օդում կախ հարցեր, որոնց պատասխանը մէկ օր թերեւ սարսափելի հարուած լինի մեղ համար։

Չը ծածկնիք մէկնից վասնդը. նայենք ամեն ձախորդ համապամանքների վրայ համարձակ. չը լինենք ջայլար, որ իր դուռիոր ծածկում է աւաղում։

Օգոյշ լինենք։

Վեր գործունեութեան տակար և ուղղութիւնը պէտք է համապատասխանեն առաջացող հանդամանքներին։ Արքան զգուշառու ու շրջահայեաց պէտք է լինեն այդ տակար և ուղղութիւնը, նոյնքան էլ նրանք պէտք է լինեն վճռական և հիմնված ամենաորոշ մի յատակադի վրայ։ Պէտք է հանգամանքների համաձայն գծագրել ձեռնարկները, որպէս և որոշել դրանց գործադրելիք վայրերը, ըստ որում եթէ մի ձեռնարկը՝ գործադրված թիւրքաց աերութեան մի վայրում՝ աջողութիւն ունենայ, նոյն երկրի մէկ ուրիշ վայրում միւնցին ձեռնարկը կարող է ունենալ ամենածանր հետևանքներ մէր դասի համար։ Օգոյշ լինենք... Եւ պատրաստվենք ամեն տեսակ բարդութիւնների համար, որոնք կարող են առաջանալ մեր դատի նըստամական դաշտամբար հայկական դատն անցնում է այժմ

մէկ այնպիսի ճգնաժամի բօվով, որից աջողա-  
թեամբ դուրս գալը, շատ հանգամանքներից կախ-  
ված լինելով հանդերձ, կախված է նաև մինչև  
մի յայտնի աստվածան նոյն իրանցից հայերից,  
հայ հասարակութիւնից:

፳፻፱፭ ዘመን

ԵՐԵՐՈՒԴ ՑՈՒՑԱԿ.

ԵՊԻԹՏՈՍ. — Աւէքսանդրիա Քաղաքից Ֆարհան  
տի և Զարմայրի միջոցավ Հանդանակված. — Գ. 1950  
զուրուշ ողջ, Դեպի Պաղտատ, Հայրենիք, Աէր, Հա-  
յաստան և Հայկ 1000-ական դ. ողջ. Մարթէն-Պիլ-  
տըր, Խկիտճէ և Օսման 500-ական դ. ողջ. Յոյս 487  
դ. և կէս ողջ. Ֆարհան, Բնիկ և Օր. Լիլա 300-ա-  
կան դ. ողջ. Մարգարիտ, Ամեն և Գ. Պարուչիքո 200-  
ական դ. ողջ, Դատաւոր 195 դ. ողջ, Թրքատեաց 150  
դ. ողջ, Մայր Հայաստան 140 դ. ողջ, Մի Քանի Եւ-  
րօպացիներ 135 դ. ողջ. Զայրմայր, Պօլսեցի, Պետրոս,  
Կայծակ, Բոց, Մի ուն, Մանուշակ, Ա. Անիցա, Զօրա-  
բարէլ, Ժայռ և Յոյս 100-ական դ. ողջ. Մրրիկ 97 և  
կէս դ. ողջ, Ռումիր 77 դ. ողջ. Փապաւէն 60 դ. ողջ.  
Սուր, Ա. Ը., Օր. Լիլիս և մի Հայ 50-ական դ. ողջ.  
Մի անձ 40 դ. ողջ, Թագւոր 25 դ. ողջ. Անեցի, Մի  
Հայ և Թաէտէսի 20-ական զուրուշ ողջ:

Կայիրէ քաղաքից Ար. Սար. ից 1 անգլ. լիրու:  
ԱՄԵՐԻԿԱ. — Լորէ նս քաղաքի Հնչակեան Մաս-  
նաժիղոց պ. գ. 25 դօլար, Ա. Յ. և Կ. թ. 21-ական  
դ. Խ. թ. 20 դ. գ. Մ, և պ. Ս. 18-ական դ. գ. գ.  
17 դ. Ս. Կ. 16 դ. Գ. Բ., Մ. Թ., Պ. Է., Մ. Ի., Ա.  
Ե., Յ. Ք., Պ. Ս. և Թ. Հ. 15-ական դ. Պ. Է. 14 դ.  
Կ. Ա. 12 դ. Ա. Թ. և Ա. Վ. 10-ական դ. Պ. Ա. 8 դ.  
Պ. Է. 7 դ. Գ. Ն., Ա. Տ. պ., Պ. Ք., Թ. Թ., Մ. Կ.,  
Ա. Կ., Կ. Ա., Հ. Ա. և Պ. Բ. 5-ական դ. Պ. Թ. և Ա.  
Թ. 3-ական դ. Յ. Կ., Ս. Ա., Ա. Ա., Ա. Աւ., Գարա-  
Լամպօյ, Ս. Պ. և Կ. Ա. Ս. 2-ական դ. Պ. Օ. 2 դ. 40  
սէնտ, Գ. Կ. Մ. Տ. Տ. Պ., Կ. Մ., Մ. Ս., Կ. Կ., Պ. Կ.,  
Պ. Պ., Յ. Պ., Կ. Բ. Պ., Կ. Կ., Պ. Ա., Պ. Մ. Զ. և  
Պ. Ա. մի-մի դ. Մ. Պ., Մ. Տ., Մ. Տ., Մ. Բ., Պ. Ա. և Ոմ  
50-ական սէնտ:

Ուստի քաղաքի Հնչակեան Մասնաճիւղից հանգանակված հետեւեալ անձերից — Մարդար Մէնպէծա, Յ. Թ., Ճէլլատ և Ա. Տ. 10-ական դօլլար, Ա. Դ. 8 դ. 50 սէնտ, Ս. Ի., Սոէթամբ և Գ. Կ. 6-ական դ. Մ. Ա., Խ. Ա., Պ. Շ., Կ. Փ., բւռտաշխ, Անվատ, Հընչակի Արդեգիր, Մ. Տ. Յ., Պ. Տ. և Գ. Պ. 5-ական դ. Ճ. Կ. Յ դ. Մ. Թ., Կ. Մ., Յովհաննէս և Ս. Ռ. 2-ական դ. Յ. Դ. 4 դ. Ս. Ո., Մ. Փ., Ա. Խ. Թ., Յ. Ա., Ս. Գ., և Ս. Տ. մի-մի դօլլար:

Լովել քաղաքի Հնչակեան Մասեածիւղց երկրորդ  
անգամ հանդանակված . — Ա. Թէկղատէ 31 դօլար, Մ.  
Ն. և Մ. Է. 11-ական դ. Կ. Մ., Ա. Պ., Փիթր Տիրա-  
ցու և Ս. Կ. 10-ական դ. Փիթիպպէ 7 դ. Ա. Մ., Ս.  
Մհծ. և Գ. Ե. 6-ական դ. Շաքար Տիրացու, Ա. Կ. Ա.  
Ա., Կ. Մ., Տ. Մ., Օ. Տէր. Թ., Աշ., Ա. Բ., Օ. Ե.,  
Մ. Գ. Գ., Մեղը, Յ Մ. և Ե. Թ. 5-ական դ. Լ. Մ.-ի  
Փեսացու, Մ. Թ. Ել., Ա. Ե. և մի Հիւր Կ. Մ. Յ-ա-  
կան դ. Գ. Ա., Տ. Գ., Գ. Տէր Ս., Պ. Ա., Ոմն, Մագ-  
սուտ, Ս., Ոմն, Ս. Գ., Կ. Թ., Կ. Ի., Մ. 2., Յէ-

թապ, Տ-Մ-Մ-Ա-, ԱՀՊ-, Մ-Ա-, Ս-Գ-, Գ-Գ-, և  
Թ-Կ- Հ-ական դ- Մ- Զ- Գ- Ս-, Ա- Գ-, Գ- Ի-, Գ-  
Գ-, ՈՒ-, ՈՒ-, ՈՒ-, Գ- Տէր Թ-, Յ- Ճ-, Մ- Գ-, Յ- Ճ-  
Ծ-, Գ- Մ-, Գ- Ա-, Կ- Մ-, Մ- Կ-, Վարժապետ, Խ-  
Յ-, Զ- Հ-, Յ- Ի-, Գ- Խ-, Գ- Մ-, Գ- Ս-, Գ- Մ-,  
Օ- Մ-, Յ- Գ-, Մ- Գ-, և Փիթր մի-մի դ- ՈՒ-, Գ- Կ-,  
Խ- Ս-, Քոյօնպս և Կուպոյ 50-ական սէնտ, Ս- Մ-, Տ-  
Գ-, և ՈՒ 25-ական սէնտ:

Թիֆրիւն. — Ա և քաղաքի ջանասէր խմբի միջոցով. — Մանուկ Պետրոսեան 1080 դուրուշ, Զմելի և Արևելք 100-ական դ. Ոմն 95 դ. Արիւն 60 դ. Գոսփօր, Կայծակ, Վարէժ, Կայծ և Յ. Շ. 27-ական դ. Հովհանոս 20 դ. Ընանուն, Դարձեալ Անանուն, Ի. Լ. և Վ. 10-ական զուրուշ:

ԾՎԱՅՑՑԱՐԻԱ. — Մասիս և Տաւրոս-ի միջոցով Լօզպան քաղաքում տեղի ունեցած մի նուագահանգեսի հասոյթ՝ 28 անդիմական լիրա, 14 շիլինգ և 5 պէսս:

ԳԵՐՄԱՆԻԱ. — Լայպցիգի հայերից 78 մարկ:

ԲՈՂԱԱՐԻԱ. — Սօֆիա քաղաքից, համակողների  
կողմից 160 ֆրանկ։ Նոյն քաղաքից Գ. Հի ձեռքով  
Պօլսեցի Վրմենակ և Ընկերներից 30 ֆրանկ։

Վառնա քաղաքի Հնչակեան Մասնաճիւղի կազմած Ներկայացումից դոյցած գումարը 300 ֆրանկ:

Ո՞ւրաբայացա, Յութեր, Հութեր, 1 անդլիսկան

ԳՐԱՆՑՈՒԱ. — Բ. Հ. Հ. Ք. Ա. Ղ. Ա. Վ. 5 ՓՐԱՆԿ:

## ԿԱՐՄԻՐ ՀԱՅ

ԲԱԴՔԵՐ ԿԱՏՈՒՄՔ. ՄԱՆՐԱԿԱՆ ԽԵՐՉԵՎԵՐԻ.

#### ՄԵԶ ՏԱԳԻՎՈՂ ՄՈՒՇՔ, ԱՊԱՌԵՆԻ, ԽՐԵՑԵ

## ԵԿ ՇՐՋԱԿԱՆԵՐՈՒՄ ՄԵԶ

(Ծարունակութիւն) 1

### ШПАЛЬ.

Ամենէն վատթար է կինձի, խուլփի ու Խիյան գաւառներու վիճակը որո՞ք, ինչպէս յայտնի է, Սասունի մէկ մասը կը կազմեն: Սասունի գեպքերուն ատեն այդ գաւառներն արդէն աշագին կորուստներ տուածէին. Տիմա ալ աշերէթները կաւալարութեան թե՝ Հագրութեամբ ոտքի ելած զանոնք իսպառ ջնջել կը սպառնան: Կէյսէնէնոր, Գնդըլման, Բանակ, Ընձքար, Զմաթաղ, Վանից կողմ, Մըլըրճոր, Էհուալ, Ահարօնք, Շուզէք, Կապէ, Նավըգ, Թըլթըփ, Կրէմօրէ, Կրէխօսէ, Պահմուայ, Հարանդ, Փարկա, Սաղտուն, Հեղին, Ընկուզնակ, Արտիսնք, Սկիթ, Բացի, Խշոննոր և Պէրմ գիւղերը կողոպտուած և շնչապատուած են քիւրտ աշերէթներէն: Հայերու շատերը տուն տեղ թողած ցիր ու ցան եղած են, անօմի, անպատսպար, մերկ ու բռքիկ. մնացածներէն Քիւրտերը և ա ֆիր (գերութեան) տուրք կը պահանջնեն թէ այս և թէ անցեալ տարուան համար: Սասունն ու Շատախսը նոյնպէս սարսափի մէջ են. Քիւրտերը ամէն կողմէ ահեղ պատրաստութիւնով կը մօտենան. այս թշուառներու քանդուած տուներուն շինութիւնը գեռ ամբողջացած չէ. իրենց օրապահիկը Մուշի յանձնաժողովի վճարուած գրամով կը հայթայթուէր. Տիմայ կառավարութիւնը այդ նպաստը բունի գագրեցուց. իրաւ է թէ կառավարութիւնը մէկ երկու թեթև

1) *Stra „Zurück“ Nr 4.*

զինուրական խումբ զրկած է լեռ. սակայն տառնց նըշպատակն է հայերը խուզարկել, զէնքեր փնտառել և յեղափոխականներ գտնել... Միախօնաբներու (ողոնք լեռն ելած նպաստ կը բաշխէին) կեանքին սպառնացան. ասոնք սասափահաջար Մուշ փախան. հիման Սասունը յանկարծ ինքինքը լքուած կը տեսնէ. Աէմալ, Շէնըք, Աէլիէկուզան և բոլոր միւս գիւղերը որ սկսած էին վերականգնել մեծ վտանգի մէջ են և բընակիչները կուզեն Մուշ ապաստանիլ (իբր աւելի ապահով տեղ մը...), սակայն Առաջնորդարանէն մարդիկ զրկուցան անոնց այդ շարժումը արգիլելու համար: Ի՞նչ պիտի ընեն այս թշուառները, այնքան մարդկային ու բնական արհաւերքներէ շրջապատուած՝ բնակարանի պակասը, հացի նեղութիւնը, ցուրտը, քիւրտերու մահացուցիչ սպառնալիքները. ու այս ամենուն հանգէպ թոյլ չը արուիր գոնէ զէն ի ձեռին մեռնիլ իրենց սուրբ հողին վրայ անցեալ տարուան մեծաթիւ և ահատակներուն հետ խառնուելու համար...

## ՍՎԵՐԴ.

Բաղեշի կոտորածը իր հակաղեցութիւնն ունեցած է Սղերդի մէջ ևս. հոն ալ ամեն մարդ իր տունը ամրացած է, հոն հալածանքը ընդհանուր քըրիստոնէից դէմ է. փողոց ենուղ հայ մը քարերու տակ կը մեռցնեն. մէկ երկու օրէ ի վեր կը լսուի թէ հոն ալ մեծ ջարդ մը տեղի ունեցած է: Խարզանի, Պղշերիի, Սլեվանի, բոլոր գեղերը կողոպտուած, քանդուած; հարիւրտուոր սպաննուած են ու եղած են ամբողջ գիւղեր որոնք մահմետականութիւնն ընդունած են, այս յուսահատ կացութերու համար: Հազարներով կը սպառի ժողովուրդը, մահացածները կը փախչին կը գաղթեն, ինչպէս վանի Աղքակ և Հայոց Զոր գաւառները, որոնց Հայ բնակիչներուն ձեռքը բաց անցագիր կուտայ կառավարութիւնը օր առաջ զանոնք երկրէն պարպելու և գարսկաստան զրկելու համար:

Տեղի ունեցող այս ամեն կոտորածներուն շարժառիթները և գործադրութեան կազմակերպեալ եղանակը եթէ փոքր ինչ ուշադրութեան առնենք, յայտնի կը տեսնենք և կը համոզուինք թէ այս ամեն նախճիներու և աւելածոց մէջ թիւքը կառավարութեան մատը կայ, թէ նա մեղակից և թելագրիչ է քիւրտերու, Զէրքէղներու և մոլեռանդ խուժանին բոլոր վայրագութեանց և հետեւաբար իւր վրայ կը ծանրանայ զլիւառը պատասխանատուութիւնը — եթէ կայ քաղաքակիթ աշխարհին մէջ ոյժ մը, որ անմեղին ու մեղաւորին, զրկեալին ու զրկողին մէջ տեղ դատաստան ընէ:

Թաղլով այդ ամենը մենք հիմու կը համրենք մէք օրհատական վայրկեաները:

## ՄԾՈՅՑ ԴԻՊՔԸ.

Մուշ, 8 նոյեմբեր 1895

Անցեալ շաբթուան թղթակցութեամբ Մշյ վիճակը ձեղ ծանուցած եմ: Գիմոկէսի սուրբին պէս կոտորածը մը գլխուն վրայ կը սպասէր և ամսոյս Յին պայմանացաւ. բայց շնորհիւ մը ձեռքը առած նախազգուշութեանց և թուրքաց խորհրդին ձախողակութեան մեղ համար քիչ վեսասարեր եղաւ: Ամօսյու Յին ուրբաթ օրը որոշուած է եղեր թուրքաց կողմէ մեղ ջարդելու: Հայերը նախազգուշակելով գալիք փոթորիկը մինչեւ վերջը մերժեցին իրենց խանութները բանալ

և առուտուրի սկսել թէ. կոռավարութեան և թէ անգլիական հիւպատոսին կողմէ եղած բոլոր գիմաները ապարգիւն մնացին. վերջապէս հազիւ 20-25 հոգի շանսալով իրենց ազգակիցներու խորհրդին իրենց խառնութները բացին, բայց այն ալ ժամը 4-էն միուշէ 8-ը միայն բաց պահելու համար: Թուրքերը որոշած էին որ մզկիթէն ելնելուն պէս սկսին ջարդը և քուրդ մը պատրաստած էին, որու ձեռքը տուած էին ջամանակակիցները աղողէլ առելթ մը պիտի ըլլար իսկոյն սկսելու ջարդն: Բայց քիւրդը, մէր բաղդէն թէ իր պարզամտութենէն ժամ 5-ին (որոշեալ ժամանակէն գրեթէ երկու ժամ առաջ) կերթայ վինագործ Տըլոյի խանութիւնի առջև և կառաջարկէ ձեռքը գտնուած հրացանը շննել: Տըլոն կը հարցնէ թէ լեցուն է թէ դատարկ, բայց քրդու ողատարկ պատասխանին վրայ կառնու և կայծհանը շարժելուն հրացանը կը պայմի և այդ կը լույս կոտորածին նշանը: Բարեւախտաբար քաղաքացի թուրքերուն մեծ մասը, որոնք որոշեալ ժամուն միայն պատրաստ լինելու էին, այդ ժամուն անպատրաստ կը գտնուին և միայն 4-500 քիւրտեր, որք Մշոյ մէջ կը գտնուէին կառավարութեան յատուկ կարգադրութեամբ, կը սկսին յարձակիլ Հայոց վրայ, որք իմանալով գարանը կը սկսին փախչիլ: Ոմանքը խաներու մէջ կապատանին, ոմանքը զէպ իրենց տուներն կուզգաւին: Շուկային վերի ծայրը երկու ճամբաներու կը բաժնուի զանազան հայ թաղեր երթալու համար և այդ կողմէր թրքաբնակ են. իսկոյն ճամբու գլուխներ կը բոնուին Ար ապալոնց Մէ հ մէտ է ֆէնտի խօճայի սօվթաներէն և մէկ մէկ անցնող հայերը կը զարնեն, որոնցմէ 6 անձինք կը մեռնին և 40 մարդ ալ կը վիրաւորուին. իսկ մնացածներն աստ անդ կ'ապատանին: Կառավարութիւնը նկատի առնելով որ հայոց խանութները գոյ և հայերն իրենց տուները քաշուած մեծ մասամբ ներկայ չեն ջարդին ենթարկուելու, նկատելով որ եթէ թաղերու վրայ յարձակին թուրքերէն ևս կորուս կրնայ պատահիլ, յարմար գատեց զօրք զոկիլ և առնուլ — զի զափթիւներու ու սուխկաններ իրենք ալ ժողովրեան հետ միանալով հայերը ջարդելու սկսած էին: Զօրքերը շուկան և աստ անդ տարածութիւնը տիրեց: Յիշատակելու արժանի է որ թուրքերն իրենց թաղերէն կրակ ըրին հայոց թաղերը շաղաքանի զարդելու սկսած էին: Զօրքերու վրայ և խեղճ հայերն, որոնց քով զէնք չէ մնացեր, իրենց վրայ անձրեի պէս տեղացող գնդակներուն չենալ չեղաւ պատասխաներու, ահ ու դողի մէջ կը սպասեն իրենց մահուան: Տեղլոյս երևելիներէն Մէրիանեան նախական Պողոս աղան և իր երկու որդիկը Վահան ու Սմբատը բանատարկեցին իրբ թէ ըստ են եղեր հայոց թէ սի վախնաք, դուք ալ զարկէք: Մնացածները իրենց տուները կը մնան սարսափահաջար. թէ անգլիական հիւպատոսէն հայերէն նամակ մը եկաւ առաջնորդարանը թէ այսուհետեւ բան մը չկայ, խառնութիւնի բացեր, բայց հայերը նկատելով թուրք բոնած ընթացքը և միշտ ըստ խօփերին թէ ուամեն տեղ հազարներով կոտորած են, մենք ինչու քիչ վեսասարկեանք, իրաւամբ կը կասկածին թէ նոր կոտորած մը կը ծրագրուի տաճկաց կողմէ և նոր պատրաստութիւններ կը տեսնուին: Թէ ինչ վիճակի մէջ

Ենք, տեսնողը միայն կրնայ հասկնալ :

Սպանուածներն են. Զորոյ թաղեցի, Խօշիկ, վերին թաղեցի Ծահօէնց Գրիգոր, Քալարեան Կալպանտ Գէորգ, բողոքական Մ. Վարդանի որդի Պօղոս և Գաւզնձի Յովօն. Բրդի թաղեցի բրուտ Ռսկեան. Խսկ Վիրաւորեալներն են 8-ը Զորոյ թաղեցի, 15-ը Վերին թաղեցի, 11-ը Ս. Մարենէ թաղեցի, 4-ը Բրտի թաղեցի, 4-ը Ճիկրացէն Թաղեցի, որոնց մէջն են Մշոյ երեւելիներէն Կախգլխեան Օհան և իր որդի Յարութիւն, Խարսեցի Աբրահամն և այլն. ասոնցմէ շատերուն վէրքը ծանր և կրնայ մահաբեր ըլլալ:

Եցիու օր առաջ կտովարութեան հրամանով շուշիայի մէջ Ամերիկեան, Համբարձուլիքը և Խուլտուղլի կոչուած երեք խաները պարզուեցան. կըսուի թէ բէտիփներ սլիտի լեցուին անոնց մէջ և Թուրքերը պիտի պաշտանեն, որպէս զի հայերն ապստամբութիւն չկարենան հանել. . .

Խանութները կը շարունակեն դաց մնալ, թշուռութիւնը կը մրցի սարսափի չետ:

Գիւղերը նոյն սոսկալի վիաճկը կը ներկայացնեն, անցած շաբթու գրեցինք կարգ մը գիւղերու աւարի և աւերածոյ ենթարկուիլը: Կրկին յարձակում եղած է Ս. կարապետ Վանքի վրայ, Սօլախցի քիւրտեր 150 ձիաւորով պաշարած են Վանքը, բայց վանքէն միաբանութեան դիմադրութեան վրայ չըկարենալով բան մը ընել ետ կը դառնան, արդէն Վանքին ոչխարիներըն քանի օր առաջ յափշտակած էին. քիւրտերու նըպատակն է ներկայ ամենայարմար առիթէն օգտուելով կողոպտել այս հնագարեան հռչակաւոր մենաստանը որուն Ճոխ գանձերը ղիրենք երազել կուտան. Խը զըլլաղու գեղի վրայ կը յարձակին քիւրտեր, բայց անմոնց դիմադրութենէն չկարենալով վես մը հասցնել կը հեռանաե: Սօտար գիւղի վրայ ևս կը յարձակին և անկէց ալ ձեռնունայն ետ կը դառնան, խոկ միւս գիւղերէն գեռ լուր մը չառինք, լնդհանրապէս վնասուողներն այն գիւղերն են, որք իւգօջնութեան գաղափարէն հեռու զէնքով պատրաստուելու տրամադրի չէին եղած: Եթէ արտաքուստ օգնութիւն մը չհանի մեղ, վերջին տրամադրութեամբ մը ամենքնիս ալ պիտի մահանանք: Թուրբաց իշխանութեան տակ ապահովութիւն յուսալ՝ իւ մեր կողմերու մոլեռնանդ թիւրք խուժանին վրայ վստահութիւն ունենալ անկարելի դարձած է:

Պարձեալ և դարձեալ կը կրկնեաք թէ սիւթապէս, տնտեսապէս, քաղաքականապէս, վերջապէս ամեն տեսակէտով մենք կարտեան, բնաջինջ անհետացման անդունդին եզրն ենք հասած:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ ՍԱՍՈՒԿԵՆ.

Խսիանցի աշըէթի պետն Սիւլէյման աղան 500  
քիւրտերով եկած Սասունի գերմ հայելնակ գիւղը  
նստած է և այն կողմի հայերն ալ իրաւամբ վախ-  
սալով տուն տեղերին ձգած ապաստանած են նորդէն  
ի Տալւոր իկ: Քիւրտերն ալ հետզետէ հաւաքուե-  
լով Տալւորիկի փռց պիտի քալեն. արդէն չքացեալ  
Տալւորիկիները վճռեր են վերջին յուսահատական  
Ֆիդով մը պաշտպանուիլ և ետ մղել իրենց արիւնա-  
ծարաւ թշնամիներ: Եթէ կարենան պահ մը ինք-  
զինքնին պաշտպանել, լաւ, թէ ոչ Մուշ պիտի գտն  
լեցուին, ուր սակայն Նոյնքան տկներկ ջարդ մը պիտի  
ըլլայ իրենց բաժինը:

Տիգրանակերտ Առաստա՞ծ լուրեր.  
Տիգրանակերտ քաղաքին մէջ տեղի ունեցած սաս-  
կալի կոտորածներն և աւերմունքը ի հարկէ լսած է. Ք-  
շալէպէն մինչև Տիգրանակերտ գտնուող միջոցի մէջ  
եղած գիւղերը քարուբանդ եղած են, նոյնպէս մինչև  
քարդին, Սլիվան, Պըշէրիկ և Հազրօ գըտ-  
նուած բոլոր հայ գիւղեր վառած, թալանած, մարդիքն  
պանուած են, մնացեալ ազատուած գիւղացիներն աստ-  
անդ ցրուած են:

Տեղաբանակերտի շրջակայթը վառուած գիւղերէն կը  
յիշատակուին հետեւալք Խըտըրպէլ, Հայ Եղիկ  
Խորաբաշ, Սարիա, Խորասագալ, Հիւսէյշ-  
նա, Կուղալատա. Տիլան, Ալօտինա, Մարա-  
քընեաթ, Միրալիա, Ամլօ Ճըրնօխի, Պայշ-  
կրէ-Ասլաթ, Զըրըդ, Հաճիճան, Խոյուշան,  
Հելին, Բաբուրգին, Կունտէճան, Թըրպէ Սի-  
պիփէրան, Սալըքան, Կուրկուլան, Ալօխ,  
Քրէսի, Զիոնէ, Բէրս Խալա, Շէֆիսթ, Ա-  
ռին Քըլկսի, Ատըշան, Բըլիկլ, Թաճտար,  
Հոտնով, Խազօի գեւղ, Տէրտրի գեւղ, Գեր-  
կուն. Բոլատ, Բաշխայա. Մըսուրիա, Բա-  
սուս, Շէլման, Կոմնէ Հայտարանքա-  
րաշնիս, Տըրսըլ, Խընճիքա, Տէրըք, Թա-  
սուլայնա, Հաղբօ, Երուն, Խօճկան, Հա-  
երի, Ալմատինա, Կըրէսիրա, Բըլհէյտար,  
Հանտափիր, Ճալտաքան, Շըքիսթոք, Բա-  
ռուրք, Կօրըք, Թըրմըրձ, Էլհան, Էլէ-  
մալխամին, և այլն. Գումար 70 գիւղ:

4PUS

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԴԵՊՔԸ

(Ծարունակութիւն) 1,

Ակադ. 25, երկուշաբթի. — Յուղումը՝ այսօր առ ելի կը սաստկանայ. Եկեղեցի, գպրոցք, խանութք փակ. եկեղեցեաց գաւիթները լեփ լեցուն, զանգակահարութիւնը կը շարունակուին. ազգային երգեր անընդհատ շատ կը շարունակուին. ընդհանուր աղաղակ մը, ժը խոր մ'է կը բարձրանայ. արձագանքը հեռիները երթալով կը կրկնապատկուի. բոլոր գրիստոնեաները չետըզչետէ հայոց ս. Աիրակոս եկեղեցւոյ գաւիթը կը խըռնուին առաջնորդական- տեղապահ Հայրը դիմաւորելու համար. մարդերու իրարանները մ'է որ կը տեսնուի. գաւիթը, վարժարաւի 4-5 դասարանները, տանիքները, զանգակատան մէջ, եկեղեցւոյ ըջակայքը մարդկանց բազմութիւնով լեցուած է: Կէս օրը անցած յանկարծ տեղեկաբերք կաւետեն թէ Հայր Սուրբը 10-15 վայրկեանէն հոս կը հասնի: Երգ, ծափահարութիւն, Երգ, Երգ, Երգ, գարձեալ Երգ: Պահ մը վերջը ա. Եղեկիէլ Հայրը հեծեալ, ժպիտ ի շըթունա. Երկեցաւ եկեղեցւոյ գրսի գուան առջև. Երիտասարդներ ու գպրցի աշակերտներ գոռ ու որոտ ձայնով մը, տեխտոտ ոգելորութեամբ մը սկսուն Երգել «Տալորիկցի կտրիթ եմ քաջ» ազգային երգը, ամեն տուն ծափահարութեամբ վերջացնելով: Տեսնելու բան էր 5-6,000 բազմութեան այս ընդհանուր ցոյցը. ալ անկարելի էր իրարու ձայն լսել. ոտք փոխելու տեղ չը կար. կարծես ամբողջ քաղաքը հօն էր խոնուեր: Երգերու ու ծափահարութեանց ոգեկյոյզ ու հոգչունչ տպաւորութեանց ներքե տեղապահ Հայրն առաջ-

Նորդարանէն ներս մտաւ և հազիւ շունչ առած՝ ժողովրդեան սկսաւ խօսել երիտասարդի մը աւիւնով և հայրական գործալիք կորովով. մասնաւրապէս շեշտեց սա կէտին վըայ. „Ժողովրդեանա կամքը իմն է. ինչ որ անոնց շահն է, իմն ալ է. պիտի պաշտպանեմ ձեր բացարձակ շահերը արիութեամբ, ձեր ուղածէն աւելին պիտի ընեմ, դուք հանդարտ կեցէք, եղած սխալը պիտի դարմանեմ: Աղդին պահանջումն իմ է“: Հազիւ աւարտած էր այս վերջնն բառերը, սոյն յոգնախուռն բազմութիւնը որոտընդուստ ծափահարութեամբ իր շընորհականիքն յայտնելով պատուեց զայն. քանի մը խօսք ալ և կրկին ծափահարութիւն: Կէս ժամ վերջը կուսակալի եա վէրը եկաւ հրաւիրեց տ. Եղեկիէլը կուսակալի կողմէն: Հայր սուրբը մերժեց պատասխան նելով թէ Արդէն յոգնած եմ և այցելուներ ունիմ. վաղը կրնամ տեսակցիլ և շնահաւորել իր պաշտօնը“: Ժողովուրդը գոհ մնաց այս պատասխանէն և քիչ քիչ սկսաւ ցրուիլ:

Այն երեկոյին, բոլոր քրիստոնէից պետերը, աղջ. առաջնորդարանի մէջ ժողով գումարեցին այս առնելու: Ժամը 3-4-ին ատենաերը եավելը կուսակալին կողմէն պաշտօնադիր մը բերաւ տ. Եղեկիէլ հօր ուղղուած, յորում յայտնած էր թէ՝ Սոյն յուղման պատճառ քանի մը հայ յեղափոխականներ եղած են. այս զիշերուընէ սկսեալ զձեղ պատասխանատու կը ձանջամ և վստահ եմ թէ, ձեր կառավարութեամբ պիտի ջանաք խաղաղութիւնը վերահաստատել ձեր հպատակութեան ու հաւատարմական պարտականութիւններն կատարելով“: Կոյ, գիշեր, բուն Ասորոց ծերունի եպիսկոպոսը մեր առաջնորդարան եկած ատեն, քանի մը թուրքիր անոր վրայ երեք անդամ հրազէն պարպած էին, ինեղ եպիսկոպոսը սարսափահար ետ դարձած և ապա կարգ մը զինեալ երիտասարդաց պաշտպանութեան ներքէ յաջողած էր ներկայ գտնուիլ նոյն ժողովյն: Ներկայք այս ոմիրն յայտնեցին գրաբեր եավերին. ծերունի եպիսկոպոսը, իբր յանկերգ կը կրկնէ “ո՞ւ կը մնայ ասայի շը բէրքէ մալը“: Թիկնապահը շը հաւատալ ձեւցուց, բայց երբ անուններն ալ արուեցան ափ ի բերան մնաց և պահ մը լոեց, ապա խոստացաւ հարկ եղած տեղը դիմելով պատժել չարագործները: Կէս ժամ չանցած վերադարձաւ և չարագործներէն երեքին ձերբակալումը հաղորդեց. միւս երկուն ալ կը բունուին յարեց. դուք հանդարտ կեցէք, չարագործներն արդէն անպատիթ շեն մնար:

Ժամը 9-ին հեռագիր մը խմբագրուեցաւ, որուն մէջ յայտնուած էր թէ՝ Կառավարութեան տեղեկագիր բոլորվին հակառակ է արդի վիճակին, հայոց և յունաց առաջնորդներուն ի բացակայութեան փոխանորդ չեղաղ քահանաներու կնքել տրուած է. բողոքականք բնաւ շեն ստորագրած. դպրոցք, եկեղեցիք, խանութք ամենն ալ փակ են, ձեր հրամանին կսպասենք:“ Սոյն հաւաքական հեռագիրն ուղղուեցաւ ազգ. պատրիարքարան, անկէց օրինակները միւս բոլոր պատրիարքարանց և ազգապետարանաց հաղորդելու պայմանաւ: Քըրիստոնեայ պետերը ամենն ալ ստորագրեցին թէ պատճէնը և թէ բնագիրը: Յետոյ որոշեցին յաջորդ օրը խանութները բանալ. եկեղեցներն ու դպրոցներն փակ պահել մինչև որ նոյն հեռագրոյն պատասխանը գայ: Քիչ վերջ ժողովը ցրուեցաւ:

27 սեպտ. չորեքշաբթի. Ժողովուրդն անհամբեր հեռագրոյն պատասխանին կը սպասէ: Կոր հեռագրեր

ալ տրուեցան, անոնք ալ անպատասխանի մնացին: Մինչ ցարդ ոչ մի դէպք:

Տիգրանակերտ, 26 հոկ. 1895.

1895 հոկտեմբերի 20, ուրբաթ օրը Տիգրանակերտի և շրջակաների օրհասը վճռուած էր:

Ամեն կողմ տիրուած էր դող ու ապաստի: 20-25 դարերից ի վեր մի կարգ անցեալ տեսարանների ականատես լինող Տիգրանակերտի պարիսպները իրանց աշտարակների ծոցում պահել էին 25 հազար աշխարհականիքն յայտնելով պատուեց զայն. քանի մը խօսք ալ և կրկին ծափահարութիւն: Կէս ժամ վերջը կուսակալի եա վէրը եկաւ հրաւիրեց տ. Եղեկիէլը կուսակալի կողմէն: Հայր սուրբը մերժեց պատասխան նելով թէ՝ Արդէն յոգնած եմ և այցելուներ ունիմ. վաղը կրնամ տեսակցիլ և շնահաւորել իր պաշտօնը“: Ժողովուրդը գոհ մնաց այս պատասխանէն և քիչ քիչ սկսաւ ցրուիլ:

Այս երեկոյին, բոլոր քրիստոնէից պետերը, աղջ. առաջնորդիւնը 20 օր առաջ արդէն իմացաւ թուրք կառավարութեան այդ վայրենի դիտաւորութիւնը, որ իր պաշտօնեանների միջցով յորդորում էր թուրք ժողովրդին զենքեր պատրաստել, խմբեր կազմել և շրջակայ գուրդ ցեղապետների հետ դաշնակցութեան մտնել:

Տիգրանակերտի գաղղիական հիւպատոս (Մք. Մելիք) և հայերի առաջնորդ Եղեկիէլ վարդապետը քանիցս դիմումներ արեցին կառավարութեան, որ այդ կարգի խովութիւնների տեղի չը տրուի և քրիստոնէայ ժողովրդի կեանքն ու պատիւը ապահովութեան առնուելով մի կարգ վտանգների առաջնորդ բայց չէ որ արդէն թելադրողը նոյն ինքը կառավարութիւնն էր, ուստի այդ դիմումներին ոչինչ կարեղորութիւնն չը տըրուեցաւ և թուրք ժողովուրդը բացարձակապէս առաջ տարաւ իրա մահացու պատրաստութիւնները:

Ենցաւ մի քանի օր, և հայ ու միւս քրիստոնէանները երկիւղ կրելով մահուան վտանգից վտակեցին իրանց խանութները մինչև խժդութիւնների ուրբաթ օրը:

Երբ եկաւ հոկտեմբեր 20-ի սկ ուրբաթը, կուսակալ Էնիս վտաշան լուր ուղարկեց բոլոր քրիստոնէանների պետերին թէ՝ այսօր անմիջապէս բացել տըւէք խանութները, որովհետեւ կառավարութիւնն պիտի ցրուէ թուրք խոռվարները և մի դէպք չի պատահիլ:

Այդ ըլր ու ցամաք խօսքերին հաւատալով Եղեկիէլ (մսի արձան) վարդապետը վերկացաւ և դոնից դուռ ման գալով համոզեց ժողովրդին, որ ամեն ոք բացէ իր խանութը և վրաղուի գործերով: Մէնք ըզգուշացրինք այդ թանձրագլուխ վարդապետին, որ չը վտահանայ կառավարութեան մեքենայութիւններին և չըստիպէ մի կարգ խեղ մարդկների, որ իրանց խանութները բացելով անգժամար զօհուեն. բայց նա ի լուր հասարակութեան յանդիմաննեց մեղ:

Ինչ է իցէ, հայ և միւս քրիստոնէանները արեցին իրանց խանութները և սկսեցին զըաղուել իրանց առօրեայ գործերով:

Միջօրէին ինն ըուպէ էր մնում երբ պայմեն վութիւնների: Պարիսպների տակ սպասող քուրդերով աշխարհականիքն իրանց առօրեայ գործերով:

(Կը շարունակի)

#### ԿԻՒՐԻՆԻ ԴԵՊՔԸ.

Հոկտեմբեր 26-ին հաւաքուեցան Աղջատաղցի քիւրտերն, համբայիշ, Գոզան-Օղեի և այլոց հրամաննատրութեանները բանալ. Եկեղեցներն ու դպրոցներն փակ պահել մինչև որ նոյն հեռագրոյն պատասխանը գորքերի և թուրք խոռվարների հուժանի հետ միացան:

և հետեւակ 500: Փոյրազ-օղի ԱՀմետ էֆէնտիի Տը-  
րամանատարութեան ներքեւ ձիւաւոր և հետեւակ քիւր-  
տեր և Աւզուն-Եայլայի չէրբէղներէն հեծեւալ և հե-  
տեւակ եկողներ 1,000: Շըշակայ գիւղերէն եկող մահ-  
մէտականներ 1,500, որոնց ամենի գումարը 6,500:  
Բոլորը միասին քաղաքին եղեցքը հաւաքված էին:

Վայրենի աւաղակներու այդ հրոսակախումբը չորս  
օր սպասեց քաղաքին բոլորտիքը ուրիշ Խմբերու հետ  
միանալու համար: Հայերը հետագրեցին թէ Բ. Դուռը  
և թէ կուսակալութեան իրենց սպառնացող վտանգ-  
ներու մասին, սակայն փոխանակ հայոց պաշտպան ու-  
ղարկելու, 300 հատ ձիւաւոր չէրբէղներ ևս եկան Սե-  
բառատիոյ կողմէն, որոնք միացան ասպասակներուն հետ  
և օգնեցին անոնց՝ հայերը հարստահարելու գործին մէջ:

Հոկտեմբեր 30-ին տեղւոյս կառավարութիւնը հայ  
ժողովրդի ձեռքէն բռնի զէնքերը ժողովրդ. բայց ժո-  
ղովրդեան մէկ մասը իրենց զէնքերը բնաւ չը յանձնե-  
ցին. մին Էօրէնի թաղը, որ քաղաքիս հիւսիսային ա-  
րևմտեան կողմը կիյնայ և քաղաքէն բոլորովին անջատ  
մի բլուրի վրայ կը գտնուի և 80 տուն զուտ հայ բը-  
նակիչ ունի, և միւսը քաղաքի հարաւային արևելյան  
կողմը գտնուաղ վերին Չախ-Չոր հայաշատ թաղը, որ  
500 տուն հայերէ կը բաղկանայ: Մնացեալք Չուղուլ  
500 տուն, Գարաճա-Էօրէն, Զէրչե-Քէօրիիր և Եաշ-  
թէփէ 250 տուն, Խասպաղ 300 տուն, Գարա-Թէփէ 250  
տուն, ասոնք զէնքերինին ամբողջովին յանձնած են կառա-  
վարութեան: Գէրման և Թէրճան անուն թաղերն ալ  
իրենց զինուց կէսը յանձնած են, որի կը պարունակին  
150 տուն:

Հոկտեմբեր 30-ին քաղաքին բոլորտիքն հաւա-  
քուած աւաղակներէն ԱՀմետ էֆէնտիի խումբը յարձակե-  
ցաւ Էօրէն թաղի վրայ, հանդիպողին սկսան սպանակէլ.  
բայց թաղին ժողովուրդը եկեղեցի գումարուած սկսան  
իրենց զէնքերով գիմադրել: Մի քանի ժամուան մի-  
ջցին քիւրտերէն 50 և հայերէն 3 հոգի սպաննուե-  
ցան և քիւրտերը վհատելով ետ քաշուեցան: Ասոր վը-  
րայ կառավարութիւնը միջամտելով խոստացաւ հայոց  
զիրենիք պաշտպանել և համոցելով զինսթափ ըրաւ:  
Զէնքերինին յաձնելնուն պէս քիւրտերը զօրբերուն հետ  
միացան և 50-էն աւելի հայ մարդիկներ ջարդեցին.  
տուներու կահ կարասիները յափշտակեցին և տուներն  
ալ այրեցին. մնացողներու բոլորը լեռներու, ձորերու և  
կաթոլիկներու տան մէջ պահուելով աղատուեցան: Հա-  
յերը զինաթափ ընելու համար գլխաւոր համոցողներէն  
մէկն էր կաթոլիկ աղդայիններէն դատարանի անդամ  
Սիմոն Կէրկէրեան:

Չախ-Չոր թաղեցիք ևս եկեղեցին ապաստանելով  
դիմադրեցին, բայց կառավարութիւնը անոնք ալ հա-  
մոզեց զէնքերինին առաւ և մէկ մասն ալ կառավարու-  
թիւն բերելով պաշտպանեց:

Գէրման և Թէրճան թաղերու ժողովուրդը, որ  
տուներու մէջ ամրանալով յարձակողներուն զէնքով  
դիմադրելու պատրաստուած էր, այդ միջոցին թաղեցի  
մահմէտականներ զինեալ լուր կը կրկեն թէ քիւր-  
տերը տուներու վրայ պիտի յարձակին և տուները կը-  
րակի տան, կը յորդորեն որ շուտ գուրս գան և ի-  
րենց տուներու մէջ պահուին: Հայերը իրենց դրա-  
ցիներու խօսքին հաւատալով երբ գուրս կելնեն, դա-  
ւաճան խաբեքաները քիւրտերու հետ միասին յար-  
ձակելով անոնց մէծ մասը կը սպաննեն, տուներու կահ  
կարասիքը յափշտակելէ յետոյ շէնքերը կրակի կուտան:

Բաղրոր այն թաղերը, որոնք կանխաւ իրենց զէն-  
քերն յանձնած էին այրուեցան: Կառավարութիւնը  
կիսերը մայր եկեղեցի լեցնելով պաշտպանել խոստա-  
ցած էր, 3,000-ի չափ կին, հարս և աղջիկ մտնել  
ուղեցին, զարքը այս կիսերը լաւ մը մերկացնելէ ետ-  
քը եկեղեցի զըկեցին, ասանց հայ բերողները կողոպ-  
տեցին և վլնտեցին և այդ պատճառու կանայք սովա-  
մահ ըլլաւ սկսեցին. մնացած կիսեր այս վիճակը տես-  
նելով, չուղեցին եկեղեցի մտնել, ասոնցմէ շատերն  
ընկան բարբարոսներու ձեռքը:

Մի քանի թուրքեր իրենց տան մէջ պահուած  
հայերը յանձնեցին քիւրտերուն, որոնք ոչխարի պէս  
մորթեցին խեղճերը:

Այս սրտառուչ տեսարանն ուժ օր տեսց. մինչ  
ոյ. 7: Դանակով և գնդակով մեռնողներու թիւը  
2,000-ի հասած է: Լեռները փախչողներու մէկ մասը  
անօթութենէ մեռած է, մէկ մասը խոտով ապրած է,  
մեծ մասն ալ ձեռք անցնելով սպաննուած են: Թուր-  
քերն իրենց ձեռքն անցած հայերուն մի մասը կրօ-  
նափոխ ըրին:

Զէրբէղները և քիւրտերը 300 հատ կոյս աղջիկներ  
և հարմեր հետերնին տարին. 150 էն աւելի աղջիկ-  
ներու և հարսերու պատիւը բռնաբարելով սպաննեցին:  
Հետերնին երթաւ չուղարկներու մէկ քանին կրակի մէջ  
նետեցին և այրեցին, մի քանին երթաւ ալ երթալու տաեն  
ջուրը նետուեցան կամուրջն և խղդուեցան:

Կառավարութիւնը միայն երկու ամիս կարօտելոց  
100 տիրէմ ցորեն տուաւ. այժմ ոչինչ չի տար, այն-  
պէս որ այժմ հայերը ոչ հայ ունին, ոչ տուն և ոչ  
անկողին և սովամահ ըլլալու վտանգին մէջ են:

Երեք երեելի մահմէտականներ 35 հայ քաջեր  
պաշտպանեցին և մահէ աղատեցին: Մնացեալ հայերը  
որ և իցէ ապաստան չունենալուն դարա-թէփէ և  
Մահմուտ աղա ասուած թաղերու 200-ի չափ վիլատակ  
գարձած տուներու մէջ կապրին այժմ:

Կառավարութիւնը հիմա սկսած է այս թշուառ ժո-  
ղովրդէն օրը 8-10 մարդ տանելով բանտարկել, ծե-  
ծել, առնելու հասկնալու համար թէ ուր են իրենց  
մարթինի հրացանները:

Կիւրինի փօստային տրուած նամակները կը քննեն  
և չուղածնին չեն ուղարկեր:

Խասպաղ թաղէն 8 մարդ ողջ մնացած է: Շուղուլ  
և Էօրէն թաղի եկեղեցիներն այրուած են: Կաթոլիկ-  
ներէն մարդ մանգամ սպաննած չեն: Հարստահարող  
քիւրտերը իրենց զէնքերը կառավարութեան յանձնե-  
լով մէկնեցան:

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

### Վ Ե Ս Պ Ո Ւ Ր Ե Կ Ե Ն ի.

1895 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆՐԵՒ.

(Տարունակութիւն) 1)

Վահանց, Հոկտ. 22. — Գիւղական ժողովրդոյ այժ-  
մու թշուառ վիճակն ու ծայրայեղութիւնը ու գրչով, ու  
ալ լեզուով կրնայ նկարագրուիլ. ամենէն քարասիրո  
ու քարագործների անգամ կը ցաւին ու կուլան. սոցա-  
միկի վիճակի մը ենթարկուելուն գլխաւոր թելադրինե-  
լով մէկնեցան:

1) 8ես „Հնչակ“ թ. 3.

Հրձիգութիւնք, պղծութիւնք գործուելէ առաջ համի թէմար փաշայի եղբայր Թօսուն, նշանաւոր՝ Համզյի եղբայր Իպրահիմ և սրա մարդիկ տեղս էին:

Տիլան գիւղէն 8-9 հարիւր ոչխար քշելով հըրտարակեցին թէ սուլթանէն հրովարտակ եկած է „հայու գլուխը և ինչքը մեղի շնորհուած է“ . ահա այս Խօսքը ընդհանուր զուցքի տեղիք տուաւ: Ոչ եկեղեցի, ոչ վանք և ոչ գիւղ թողին: Զերծ մնացած են միմիայն Օրորան, Քլուրմակ և Խառկէն գիւղերը:

Վեծոփայ վանք, Խառչերով, Փայխներ գիւղեր Հայտարանցի Քիւրտերէն համի Հասան և որդին Էմին փաշան կողոպտել տուին և Փայինները կրակեցին: Բնակիչուատեսէ, հագուստէ և պատսպարանքէ զուրկ. մինչեւ անգամ կանանց, հարսներու և աղջիանց հագուստներն այ մերկացուցին—կողոպտեցին:

Յարութիւն և Էսպանէնէկ գիւղեր բաժին մնացած էին Ատամացի Ապտիին և եղբօրը Ալին, Խուսուֆէ Հացափի լամաւկ Ահմէտին և իրենց 300 զինեալ չարագործաց:

Արաքու սկսեալ մինչեւ նորշէն (մօտ 3 ժամ հեռաւարութեամբ) գիւղ և ասկից անդին Էմին փաշայի և եղբարցը, Թօսունի, Հիւսէյին փաշայի եղբօր Սուլթանի և իրենց հազարի մօտ ձիւռորաց շահատակութեանց թատերավայրն է: Իրաւ է որ Արաքու գիւղացիք քաջաբար մինչեւ վերջ դիմադրեցին և իրենցմէ քիւրտեր չը կրցան աւար առնել, բայց իրենց նահատակները տուին:

Այժմ միայն գանձակ գիւղի մէջ 400-է աւելի գիւղացիք թէ կին, թէ տղայք մերկ, անպատսպար և սովալուկ խոնուած են Աղա-Նատօի պաշտպանութեան տակ, (՞՞) մինչդեռ ոչխար և տաւարեղէն իրենց կենաց փրկութեան համար հատօն առած և Ազի գիւղը զրկած է, և իր որդիք ու թոռներ չարագործութիւնք չը մնաց որ չը գործեն պաշտպանութեան քողին տակ:

Հիւսէյին փաշան սա առաւելութիւնն ունեցած է որ աւարտներու ցուցակը ունի և այդ աւարէն հաւասարէ իր մարդոց կը բաժնէ:

Արտնէն եկող թիւրք սայլապաններ երկու ոչխար, մէկ կանա (մօտ 2 քիլ) շաքարի տուած են: Զաւար և այլ ուտելիք քիւրտ կանայք իրենց վարտիքներով գունագունտ փոխադրելնին կը պատմէին: Կեօղ Օզլանայ շէյլս վանուց և եկեղեցւոյ մինչ իսկ Խաչկաներն սայլով փոխադրած են:

Վեղնէ ի զատ կան թիւրքը և ողջախոչ քիւրտեր. ամենքն ալ զարմանաց ենթարկուեցան և զաւեշտ կը համարին այս ամեն չարեաց մայր Էմին փաշայի աներձագ Հայտար պէյի իրը քնիչ ուղարկուիլը: Այս գաւառի 18 հայաբնակ գիւղերը նոյն սահմանի Համիտիէ Հեւսէյին, Էմին, Թէմուր և այն փաշանների միջցաւ խապար կը կողոպտուին, կայրուին, և 500-ի մօտ տներ, որոնցմէ 4,000-ի մօտ անձինք հալածական աստանդ զիրուցան կը լինին, ապրուստէ, բնակութիւնէ զուրկ, մերկ, բոկոտն, այր և կին, ծեր և տղայ, իրարմէ զատվոծ լերանց և ծովեղբեայ ժայռերու մէջ կապատանին:

Առա ներքը կը զետեղենք վերցիշեալ 18 գիւղերէն 10 նշանաւոր գիւղերի անուանց ցուցակը: —

Ճիւտակեաչ	50	տուն,	432	հոգի
Շակիծակ	40	"	383	"
Արջոնից վանք	17	"	133	"
Արմետանք	50	"	488	"
Գումար	157	"	1136	"

Գանձակ	54	"	491	"
Կինաբեր	8	"	83	"
Տիլան	25	"	217	"
Պանսոն	35	"	421	"
Բերգաղ	43	"	417	"
Մարդապանք	16	"	117	"
Գումար	428	տուն,	3182	հոգի.

Կո վեց գիւղեր	20	տուն.	180	հոգի.
Յարութիւն	30	"	236	"
Խաչերով	20	"	255	"
Հասպիսնակ	35	"	320	"
Մեծոփայվանք	3	"	85	"
Փոյկախներ	15	"	30	". (այրուած)
Գումար	123	տուն,	1105	հոգի

#### ԱՐԾԱԿ (ԲԶՆՈՒՆԵՒՔ).

Ոյն գաւառի գրեթէ բոլոր հայաբնակ գիւղեր վերկ յիշուած փաշաններու գունտերով աննկարագրելի խժգութեամբ աւարի տրուելով բոլորովին կամայանան մօտ 700 տուն, 10,000-ի մօտ անձինք տունէ-տեղէ, հացէ, հագուստէ, ոչխարէ, տաւարէ, զուրկ և իսպառ մերկ այլեր և կիններ, հարսներ և աղջիկներ պատառ մը շրի կարօս փախստնկան կը դաւանան գոնէ մերկ անձերնին ազատելու այդի բարբարոսական գաղանութենէն:

Առէն գիւղէն կլազմանութիւն ութ հոգի և կը վիրաւորուին 12 անձինք: Ահա այդ սպանուածների անւանց ցուցակը: Մուրատ Մանուկեան, Մալիսաս Յակոբեան, Եղիազար Սարգիսեան, Մարտիրոս Աւագեան, Մարգար Սարգիսեան, Գասպար Գրիգորեան, Գասպար Թամայ-եան, ութերորդի անունը մոցած է թաղով քահանան:

Փոյկախներ կը վիրաւորուի կին մը: Գիւղը կրակի կը տրուի, բոլոր մոխիր գանալով:

Դարաբէշիշ և այլ գիւղերու եկեղեցեաց աւոթներ կը կողոպտուին:

#### ԱՊՏԱԿ

ԵՐԳԻԺԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
(ՄԱՍՄԱՆԱՑ)

Լոյս տեսաւ „Ապտակի“ երկրորդ տարւայ թ. 10, վետրվարի: Առաջին երեսի վրայ մհանդիր նկար Շամազանի տօների անիթով. մծ կառք, որի մէջ վրամած է մի երկաթեայ ամուր տակառ: Արա մէջ փակված է առլիթանն իր մօր նետ: Կառքը շրջապատված է մնապանակ ծիառըններով: Նա զնում է համը բուրելու մծ մարզարէի վերարիւն, մի ժամ մանապար ներու պալատից, եւ տակառում է նստել իր կեանքի ապահովութեան:

„Ապտակի“ այդ համարի բովանդակութիւնն է. —

Աճառաւը ԲՈՆԱՊԵՏԾ. — ԱՍՊԱՏԱԿԻ ՀՐԱՄԵԴԵՑ (ոտանաւոր). — Օ (զո). — ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՇՈՒՄ. — ԽԵՂԱ ՁԵՅՑԻՆ. — ԺԱՄԱՆԱԿ (Տեսակցութիւն Պատրիարքի և Աթա-նաց փաշայիր). — ԱՆԴԻՎԱՅ. — ՀԱՆՉԱԿԱՆ:

„Ապտակի“ տարեկան բաժանորդագինն է նիստ Փիանկ: Հացեն միեւնոյնը, ինչ որ ՀԱՆՉԱԿԻ:



Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].